



ՊԱՇՏՈՆ՝
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ՝
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ՝
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ՝
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ՝
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ՝
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ՝

ՏԱ մասնագետ
Լրիվ դրույք
ք. Երևան, ՀՀ
Հնարավորինս շուտ
Նոյեմբերի 27, 2018թ.
Դեկտեմբերի 16, 2018թ.
Անժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այդի Բանկը փնտրում է հմուտ և բանիմաց թեկնածուի տեղեկատվական անվտանգության մասնագետի թափուր հաստիքի համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- «Գործառնական օր» համակարգի և այլ տեղեկատվական համակարգերի օգտագործողների գրանցման, իրավասությունների տրամադրման, փոփոխման և դադարեցման վերահսկողություն, գործողությունների մշտադիտարկում,
- «Գործառնական օր» համակարգի և այլ տեղեկատվական համակարգերի անվտանգության խնդիրների ուսումնասիրություն, դրանց պատճառների բացահայտում, հնարավոր լուծումների առաջարկների կազմում,
- «Գործառնական օր» համակարգի և այլ տեղեկատվական համակարգերի անվտանգությանն ուղղված նոր լուծումների ուսումնասիրություն, ներդրման գործընթացներին մասնակցություն,
- «Գործառնական օր» համակարգի և այլ տեղեկատվական համակարգերի առանձին մոդուլների թարմացումների թեստավորման և ներդրման աշխատանքներին մասնակցություն,
- «Գործառնական օր» և այլ տեղեկատվական համակարգերի իրավասությունների բաշխման մատրիցի ձևավորման/վերանայման աշխատանքներին մասնակցություն, առաջարկների կազմում,
- Տեղեկատվական անվտանգության դրույթների վերաբերյալ աշխատակիցներին իրազեկում,
- Տեղեկատվական անվտանգությանը վերաբերող ներքին իրավական ակտերին համապատասխանության մշտադիտարկում և հաշվետվությունների կազմում,
- Մասնակցություն տեղեկատվական անվտանգությանը վերաբերվող ներքին իրավական ակտերի ստեղծման և խմբագրմանը,
- Տեղեկատվական համակարգերի և ծառայությունների անվտանգության ապահովման համալիր գործողությունների իրականացում:

ՊԱՅԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Համակարգերի ադմինիստրավորում (Windows, Unix, Linux),
- Համակարգչային ցանցերի տեխնոլոգիաների իմացություն ներառյալ՝ Networks LAN, WAN, network protocols, Routers, network troubleshooting, Firewall Configuration/Administration,
- Շտեմարաններին վերաբերվող տարրական գիտելիքներ,
- Տեղեկատվական անվտանգության կառավարման վերաբերյալ գիտելիքներ,
- 3 և ավել տարիների աշխատանքային փորձ որպես համակարգերի/ցանցի ադմինիստրատոր կամ տեղեկատվական անվտանգության մասնագետ,
- Նորմատիվ ակտերի հետ աշխատելու հմտություններ,
- Հաղորդակցվելու բարձր ունակություն,
- Թիմային աշխատանքի ունակություն,
- Անալիտիկ ունակություն, խնդիրներին լուծում տալու հմտություն,
- Խնդիրների դասակարգման և կառավարման ունակություն,
- Ռուսերեն, Անգլերեն լեզուների իմացություն:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարզևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերոնշյալ հաստիքի պահանջներին, և Դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴԻ Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴԻ Բանկ» ՓԲԸ հիմնադրվել է 1990թ. թեթև արդյունաբերության բնագավառի ձեռնարկությունների կողմից՝ որպես փայտափրական կոմերցիոն բանկ: 1996թ. բանկը գրանցվել է (ՀՀ ԿԲ արտոնագիր No 9) և սկսել է գործել որպես «Անելիք Բանկ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն: 2007թ. «Անելիք Բանկ» ՍՊԸ վերակազմավորվել է փակ բաժնետիրական ընկերության: «Անելիք Բանկ» ՓԲԸ բաժնետերերի 22.12.2017թ. Արտահերթ Ընդհանուր Ժողովի որոշմամբ «Անելիք Բանկ» ՓԲԸ-ն վերանվանվել է «ԱյԴԻ Բանկ» ՓԲԸ-ի և ս.թ. հունիսի 4-ից ներկայանում է հանրությանը նոր ֆիրմային անունով: